

ԾՆՈՂԻ ԿՍԳԻԾԸ.

Ո՛վ անիրաւ մահ, ինչո՞ւ դու շուտով
 Քաւիթս մտար քո սուր մանգաղով,
 Եւ անխղճաբար իմ գառնուկներին՝
 Անխնայ զոչեցիր քո սուր մանգաղին.

Պաթնկեր էին, պիտի աճէին,
 Ձափահաս դարձած՝ ճիւղ արձակէին.
 Բայց անգրթաբար ինձնից խլեցիր՝
 Մայիսի տեղը՝ Յունուար ինձ տուիր:

Տղիս անունը՝ կոչվումէր Արամ,
 Անմեղ աղջկանս՝ ծաղիկ Անթառամ,
 Առանց խղճալու դու իմ արտասուաց՝
 Ինձ բաժին թողիր վիշտ, սուգ, կոծ ու լաց:

Գրկիցս երկուսին միասին առար
 Դէպ ի նեղ ու մութ գերեզման տարար,
 Իսկ ես թշուառս՝ յոյս կորցրած՝
 Նոցա շիրիմներն եմ ամուր գրկած:

Ո՛վ անիրաւ մահ, գաւիթս մտար,
 Ձոյգ զաւակներս միանգամ տարար,
 Նորանցով պէտք է բաւականանան՝
 Թէ սքոյ տունս նորից պէտք է գաս:

Ով գթած Աստուած, վշտահար սրտով
 Քեզի եմ դիմում լաց ու կսկիծով
 Գառնուկներիս մահն ինձ շատ համարիր
 Նոր տալը՝ Քո կամքն է, եղածը պահիր:

Գրաչար Ներսէս Մ. Տ. Աւետիբեանց.